ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

04.12.2014թ.

ՈՐՈՇՈՒՄ N22

2015Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ և ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 18-րդ կետի պահանջներով:
Քաղցրաշեն համայնքի ավագանին

Որոշեց

Հաստատել Քաղցրաշեն համայնքում 2015թ-ի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետա-շինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տրամադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանելէ հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեզործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500 դրամ:

բ) սյուն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բ.ա) 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15.000 դրամ

բ.բ) 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 դրամ:

բ.գ) 1001–ից 3000քմ քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50.000 դրամ և 3000քմ ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես օբյեկտների համար 80000դրամ:

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

գ) մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500դրամ:

դ) 20 և ավելի քմ ընդհանուր մակեես ունեցող օբյեկտների համար 2500դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վրակառուցման, ուժեղացման, վերանորոգման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետա-շինարարական նախագծով

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ:

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը: օբյեկտի

ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա,սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակ 4000 դրամ:

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակ 3000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա. բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքերը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 100դրամ 1քմ-ի համար:

բ. հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքերը սահմանել 150.000 դրամ:

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000 դրամ.

6. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենները տրամադրելու համար սահմանել 500 դրամ:

7. Մրցութներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել 1000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

1. Կ. Արարատյան
2. Գ. Փալիկյան
3. Խ.Սահակյան
4. Ի. Սահակյան
5. Ա. Հակոբյան
6.Յ.Մկրտչյան
7. Հ. Հակոբյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ